



### 36. ՍՈՒՏԱՍԱՆ

Ըլնում ա շիլնում մի թագավոր: Էս թագավորը սաղ իրա երկ-  
քումը ջառ ա գոռալ տալի, թե՛ ռո՛վ կարենա մի էնթավոր լավ  
սուտ ասի, որ ինքը հավան կենա, նրան մի ոսկե խնձոր կտա:

Դալիս են, ամեն դէից վեր են կենում գալիս՝ է՛լ թագավորի  
տղա, է՛լ նազրի տղա, է՛լ վեզրի տղա, մախլաս՝ ո՛վ ասես գալիս  
ա սուտ ասում: Թագավորը ոչ մինին էլա չի հավանում:

Վերջը գալիս ա մի խեղճ քյասիր, օրեն հացի մուրուցկան. մի  
ճքա բղուղ վեր ա ունում, գալի թագավորի կուշտը:

— Ա՛յ մարդ, խի՞ ես էկե,— հարցնում ա թագավորը:

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— էկել եմ փողս  
ուղեմ. էս բղղովը մին ոսկի ես պարտ՝ տո՛ւ:

— Սո՛ւտ ես ասում,— ասում ա թագավորը,— ես քեզ զատ  
չեմ տալու:

— Սուտ եմ ասում՝ ոսկե խնձորը տո՛ւ, ոնց որ խոստացել ես:  
Թագավորը նոր ա գլխի ընկնում, թե բանը ընշումն ա, խոսքը  
փոխում ա.— Զէ՛, դո՛րթ ես ասում,— ասում ա:

— Դորթ եմ ասում՝ մի բղղուղ ոսկիս տո՛ւ:

Թագավորը տենում ա, որ չէ՛, Սուտասանը տարավ, էլ ձեն-  
ձպտուն չի հանում, սուտ ու փռա վեր ա ունում ոսկե խնձորը տալի  
ճրան: